ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» մարտի 2014թ. N --- Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N 76-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 25-ի «Երևանի քաղաքապետի 2013 թվականի նոյեմբերի 7-ի N 5551-Ա որոշումն ու «Աջափնյակի շախմատի դպրոց» և «Դավթաշենի շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները հաստատելու մասին» N 76-Ա որոշումը լրացնել 3-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝

«3.«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ, 2-րդ մասի ա), գ), դ), ե) և է) կետերով նախատեսված Երևանի քաղաքապետի լիազորությունները պատվիրակել՝

1)«Աջափնյակի շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մասով Երևանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարին.

2)«Դավթաշենի շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մասով Երևանի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարին։»։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N 76-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետի 2013 թվականի նոյեմբերի 7-ի <<Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծելու մասին>> հ.5551-Ա որոշմամբ հիմնադրման միջոցով ստեղծվել է <<Աջափնյակի շախմատի դպրոց>> և <<Դավթաշենի շախմատի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները, իսկ Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 25-ի N 76-Ա որոշմամբ հաստատվել է Երևանի քաղաքապետի 2013 թվականի նոյեմբերի 7-ի <<Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծելու մասին>> հ.5551-Ա որոշումը ու <<Աջափնյակի շախմատի դպրոց>> և <<Դավթաշենի շախմատի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները։

<<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքապետի առաջարկությամբ եւ ավագանու որոշմամբ վարչական շրջանի ղեկավարին կարող են պատվիրակվել նաեւ քաղաքապետի այլ լիազորություններ, բացառությամբ ավագանու հետ հարաբերություններում ունեցած լիազորությունների:

Վերոգրյալից ելնելով առաջարկվում է վերը նշված կազմակերպությունների կառավարման լիազորությունները առավել արդյունավետ իրականացնելու համար <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ, 2-րդ մասի ա), գ), դ), ե) և է) կետերով նախատեսված Երևանի քաղաքապետի լիազորությունները պատվիրակել՝ <<Աջափնյակի շախմատի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության մասով՝ Երևանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարին, իսկ <<Դավթաշենի շախմատի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության մասով՝ Երևանի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N 76-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 25-ի N 76-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի երկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N 76-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 25-ի N 76-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ